

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻԶՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ»

«Իմ քաղաքականությունն զալուց հետո 2-3 տարվա համար ծրագրված խոստումներն արդեն կատարվել են, հիմա մենք սկսում ենք գործել՝ կապված 20-ամյա հեռանկարի հետ»,- երկրի տարածաշրջաններից մեկում նախընտրական հանդիպմանը հայտարարեց վարչապետ Բիժինա Իվանիշվիլին:

«Ցանկանում եմ հիշեցնել, որ իմ առաջին իսկ հայտարարության մեջ ասացի, որ քաղաքականությունում կմնամ 2-3 տարի, ապա կսկսեմ զբաղվել հասարակական գործունեությամբ: Ես կատարեցի առաջիկա 2-3 տարվա համար ծրագրված իմ խոստումները, երկրում թողնում եմ եվրոպական տիպի իշխանություն եւ հիմա սկսում եմ իմ գործունեության 20-ամյա փուլը, եւ 20 տարի հետո մենք կհասնենք վերջնական հաղթանակի»,- հայտարարեց վարչապետը:

Միաժամանակ Բիժինա Իվանիշվիլին ընդգծեց, որ անցնում է այն հատվածը, որտեղ շատ աշխատանք կա:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՕՐԵՆԱԴԻՐ

ՀԻՄՆՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ



Հոտեմբերի 4-ին Վրաստանի խորհրդարանը միաձայն պաշտպանեց Սահմանադրական բարեփոխումների իրականացման նպատակով պետական հանձնաժողովի ստեղծման գաղափարը, որը գլխավորելու է խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին եւ, որը 2014 թվականի սեպտեմբերի 1-ի համար պետք է մշակի սահմանադրության նոր մոդելը:

Որպես հանձնաժողովի նախագահի, խորհրդարանի նախագահին հանձնարարվել է մեկ ամսվա ընթացքում ներկայացնել հանձնաժողովի կառուցվածքը, դրա գործունեության եւ որոշումների ընդունման կանոնները, նաեւ այդ ժամանակահատվածում համալրել հանձնաժողովը:

Նախօրոք ձեւավորված կանոնների համաձայն, հանձնաժողովի աշխատանքին մասնակցելու է 20 պատգամավոր: Հանձնաժողովում կընդգրկվեն նաեւ մեկական ներկայացուցիչներ այն կուսակցություններից, որոնք ստանում են պետական ֆինանսավորում, նաեւ մեկական ներկայացուցիչներ այն կուսակցություններից,

որոնք պետական ֆինանսավորում չունեն, սակայն որոնց թեկնածուները հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրություններին կկարողանան հավաքել ընտրողների ձայների առնվազն 3 տոկոսը: Միաժամանակ, ելնելով զբաղեցրած պաշտոնից, հանձնաժողովի անդամներ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱԿԵՏԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԵՎ 18-ԻՆ

Վրաստանի նախագահության թեկնածուների բանավեճերն ուղիղ եթերում կանցկացվեն ընտրություններից 10 օր շուտ, հոկտեմբերի 17-ին եւ 18-ին Հանրային հեռուստատեսության առաջին ալիքով: Հաղորդումը վարելու է Էկա Միշվելաձեն:



Հաղորդմանը մասնակցելու են նախագահության որակավորված 7 սուբյեկտներ՝ Գիորգի Մարգվելաշվիլին, Դավիթ Բաքրաձեն, Կոբա Դավիթաշվիլին, Սերգո Զավախաձեն, Գիորգի Թարգամաձեն, Զուրաբ Խարատիշվիլին եւ Թեյմուրազ Մժավիան, որոնց կտրվի հավասար ժամանակ հանդիսատեսին իրենց նախընտրական ծրագիրը ներկայացնելու եւ մյուս թեկնածուների հետ բանավեճելու համար:

Հանդիսատեսը կարող է հաղորդման ժամանակ հարցեր առաջադրել թեկնածուներին, եթե մինչ այդ մտնեն առաջին ալիքի կայքէջը կամ հարցերն առաքեն info@gpb.ge էլեկտրոնային փոստի հասցեով:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

«ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ» ԴԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ ՄՆԱՑ ՆՈՒՅՆԸ, ՓՈՒԿԵՑ ՄԻԱՅՆ ԴՐՈՇԸ

ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ «ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՄԱՆ» ԶԱՂՆՈՐՀՐԳԻ ԱՆԳԱՄ



Համագումարը կրկին կուսակցության լիդեր ընտրեց Միխեիլ Սակաշվիլուն: Գլխավոր քարտու-

Հոկտեմբերի 5-ին Թբիլիսիի մարզապալատում անցկացվեց «Միասնական ազգային շարժում» կուսակցության 5-րդ համագումարը:

ղարի պաշտոնում մնաց ներկայումս կամուրջի վրա: Կուսակցության ղե-

կավարության կազմում կատարվել են որոշակի փոփոխություններ, ներկայումս դրա կառավարող մարմինը դարձել է քաղաքական խորհուրդը, որի մեջ ընդգրկված են 68

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

«ԹԲԻԼԻՍՈՒԲԱ 2013»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 34-ՐԴ ԱՆԳԱՄ ՆՇԵՑ ԻՐ ՏՈՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 4, 5 եւ 6-ին Վրաստանի մայրաքաղաքում նշվեց ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»:



Տոնի շրջանակներում քաղաքի տարբեր թաղամասերում անցկացվեցին տարբեր միջոցառումներ, բացվեցին Թբիլիսիին եւ թբիլիսցիներին նվիրված աշխատանքների, ժողովրդական արվեստի նմուշների ցուցահանդեսներ, անցկացվեցին զինու եւ երգի փառատոներ:

Ավանդույթի համաձայն, այս անգամ էլ կայացավ Թբիլիսիի պատվավոր քաղաքացիների կոչման շնորհման արարողությունը: Ընթացիկ «Թբիլիսոբային» Թբիլիսիի

պատվավոր քաղաքացիների կոչում շնորհվեց 19 քաղաքացիների: Պատվավոր կոչման արժանացան գրող Թամազ Գիլաձեն, դերասան Ամիրան Շալիկաշվիլին, Իլիա Ճավճավաձեի հուշաթանգարանի տնօրեն Մզիա Նադիրաձեն, Թբիլիսիի Ավետարանական եկեղեցու արքեպիսկոպոս Մալխազ Սանգուլաշվիլին, գրադարանավա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱՔԱՂԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Թբիլիսոբային» մասնակցելու համար Թբիլիսի էին ժամանել թուրք քաղաքների պատվիրակությունները: Հյուրերի թվում էր Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը:



Երեւանյան պատվիրակության ղեկավարը Թբիլիսիի քաղաքապետարանում կայացած պաշտոնական հանդիպման շրջանակում, նախ Թբիլիսիի քաղաքապետ Գիգա Ուգուլավային փոխանցեց Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի Թբիլիսիի օրվա առթիվ իր վրացի գործընկերոջն ու

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԹԲԻԼԻՍԻ ԶԱՂԱՔԱՂԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՅՈՒՄ Ե «ԷՐԵՎՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ» ՏՈՆԻՆ

Հոկտեմբերի 11-ին մեկնարկեցին «Էրեւունի-Երեւան 2795» տոնակատարության միջոցառումները:

Երեւանի ավանդական տոնին մասնակցելու համար Հայաստանի մայրաքաղաք էին ժամանել աշխարհի 30 քաղաքների պատվիրակությունները: Հյուրերի թվում էր նաեւ Թբիլիսիի քաղաքապետարանի պատվիրակությունը, քաղաքապետ Գիգի Ուգուլավայի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմում էին Թբիլիսիի սակրեբուլոյի պատգամավոր Մամուկա Ախվելդիանին, պաշտոնական այլ անձինք:

Հանդիսություններից առաջ Գիգի Ուգուլավան Երեւանում մասնակցեց թուրք քաղաքների ներկայացուցչական խորհրդաժողովին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՌԱԶԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՈՒՄ

Վրաստանը եւ Հայաստանը պատրաստակամ են ամրապնդել եւ ընդլայնել համագործակցությունը հեռահաղորդակցության ոլորտում:

Նման հայտարարությամբ հանդես են եկել Վրաստանի էկոնոմիկայի կայուն զարգացման նախարարության եւ Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացուցիչները՝ Երեւանում կայացած հանդիպման ժամանակ: Հանդիպմանը քննարկվել է մասնավորապես, Վրաստանի եւ Հայաստանի սահմանամերձ գոտի-

ներում ռադիոհաճախականության տիրույթները լայնաշերտ շարժական կապի ծառայության կողմից ճիշտ օգտագործելու ուղիներն ու հնարավորությունները, ինչպես նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր՝ կապված կապի եւ հեռահաղորդակցության ոլորտում իրականացվող բարեփոխումներին եւ ծրագրերին:

ՕՐԵՆԱԴԻՐ

ՀԻՄՆԿԵՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կղաճան սահմանադրական եւ գերագույն դատարանների նախագահները, Աբխազիայի եւ Աջարիայի ինքնավար հանրապետությունների գերագույն խորհրդի նախագահները, ժողովրդական պաշտպանը, արդարադատության նախարարը, նախագահի եւ կառավարության խորհրդարանական քարտուղարները, փաստաբանների ասոցիացիայի նախագահը: Բացի այդ, հանձնաժողովում կընդգրկվեն իրավաբանների ակադեմիական շրջանների եւ ոչ կառավարա-

կան հատվածի 20 ներկայացուցիչներ:

Ինչպես նշեց խորհրդարանի պատգամավորների մեծամասնությունը, սահմանադրական առաջիկա լայնամասշտաբ բարեփոխումների նպատակը «սուպերվարչապետական» մոդելի փոփոխումն է, որպեսզի ստեղծվի իշխանության ճյուղերի միջև փոքրիշատե հավասարակշռված մեխանիզմ:

Իսկ մինչ այդ, Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ ընդունեց վարչապետի եւ կառավարության իրավասությունները սահմանափակող սահմանադրական փոփոխությունը: Փոփոխության համաձայն,

վարչապետը զրկվում է անկախ խորհրդարանից, կառավարությունը փոխելու իրավունքից: Նրան պարտադրվում է խորհրդարանի առջեւ բարձրացնել կառավարությանը վստահության քվեի հարցը: Նաեւ կառավարությունը եւ վարչապետը զրկվում են իրենց համար ցանկալի օրինանախագիծը, որը մերժվել է խորհրդարանի կողմից, կառավարության վստահության հարցի հետ առնչվելու եւ դրանով իսկ խորհրդարանը ցրելու սպառնալիքի ներքո, օրենսդիրներին այն ընդունելը պարտադրելու իրավասությունից:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ՎԱՂԱՄԱՍԿԵՏ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Անցնում եմ, որովհետեւ յուրաքանչյուրը պետք է զգա իր պատասխանատվությունը, որ բարձրացել է արհեստավարության

մակարդակը, որը մեզ չի բավարարում բոլոր ոլորտներում: Վերջին 2-3 շաբաթվա ընթացքում ես հանդիպումներ եմ ունեցել փորձագետների եւ լրագրողների հետ եւ նրանց հիշեցրել իրենց իսկ

արտահայտությունները եւ խնդրել հիմնավորել այն, ինչ ասել եմ, թեպետ շատ հարցերում նրանք փաստարկներ չունենին: Ռա հենց այն է, ինչ վերաբերելու է երկրի բոլոր քաղաքացիներին, յուրա-

քանչյուրը զգալու է պատասխանատվություն, յուրաքանչյուրը պետք է հիմնավորի իր ասածը: Այնպես որ, այդ ուղղությամբ շատ աշխատանք ունենք»,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍԱՆ-ԵՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐՊԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՂԵԿՎԱՐԻ ՀԵՏ

Պոլտեմբերի 9-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հանդիպում ունեցավ Եվրամիության դիտորդական առաքելության նոր ղեկավար Տայվո Կլաարի հետ:

Ինչպես հանդիպմանը հայտարարեց Միխեիլ Սաակաշվիլին, վերջին շաբաթների ընթացքում բռնազավթիչների կողմից նկատվում է մեծ ակտիվություն, ովքեր լրացուցիչ յուրաց-

րել են եւս մի քանի հարյուր հեկտար հողատարածք: Նախարարի պարզաբանումներով, նրանք յուրացրել են շատ ավելի հողեր, քան 2008 թվականի Լիախվի կիրճում: «Բնակա-

նաբար, դա առանձնակի սարդիչ բնույթ է կրում: Գտնում եմ, որ դա հետապնդում է քաղաքական նպատակ: Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի եվրոպական մեր գործընկերների հետ դադարեցնենք առաջիկա սարդիչ գործողությունները»,- հանդիպմանը հայտարարեց Վրաստանի նախագահը:

ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՏՈՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՄԵՎ ՏԱՐՈՒՄ

Եվրամիության հետ ասոցիացման պայմանագիրը կատորագրվի առավելագույնս մեկ տարում: Այդ մասին միջազգային խորհրդարանական խորհրդաժողովի ավարտից հետո հայտարարեց եվրամիությունից հարցերով Վրաստանի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին:

«Նման բարձր մակարդակի հանդիպումն արտակարգ կարեւոր էր մինչեւ վիճարկության գագաթաժողովը: Մեզ կրկին անգամ տրվեց հնարավորություն նշելու մեր նպատակներն ու խնդիրները, որոնք կապված են վիճարկության գագաթաժողովի եւ դրան հաջորդող գործընթացների հետ, ինչպիսիք են վիճարկումն ասոցիացման եւ ազատ առեւտրի պայմանագրերի ստորագրումը, որից հե-

տո կարճ ժամանակում կբարձրացվի անմիջականորեն ԵՄ-ի հետ ասոցիացման պայմանագրի ստորագրման հարցը: Ռա պայմանագիր է, որը ԵՄ-ը Վրաստանի ինտեգրումը կդարձնի անշրջելի»,- նշեց Ալեքսի Պետրիաշվիլին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ՎՐԱՍԱՆԸ ԴԻՄԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի արտգործնախարար Մայա Փանցիկիձեն Գերմանիա կատարած այցի շրջանակներում հանդիպեց իր գերմանացի գործընկեր Գիոր Վեստերվելեի եւ կանցլերի անվտանգության քաղաքականության ու արտաքին հարցերով խորհրդական Քրիստոֆ Յոյագենի հետ:

Փանցիկիձենը սկսած՝ ռուս սահմանապահները լարավիակոցներ են անցկացնում Ցխինվալիի շրջանի վարչական սահմանին, եւ մի շարք հատվածներում սահմանը խորացվել է Վրաստանի տարածքի ներսում: Նույն գործընթացը նկատվում է նաեւ Աբխազիայում: Փանցիկիձենը հայտարարել է, որ Գերմանիան ավանդաբար լավ հարաբերություններ

ունի Ռուսաստանի հետ, ինչի համար էլ ինքը խնդրել է ազդել Ռուսաստանի վրա կապված վերջին իրադարձությունների հետ: Փանցիկիձենը ու Վեստերվելեն քննարկել են նաեւ Վրաստանի եվրամիությունից հարցը եւ, մասնավորապես, վիճարկում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովի հարցը:

«ԹԲԻԼԻՍՈՒԲԱ 2013»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 34-ՐԴ ԱՆԳԱՄ ՆՇԵՑ ԻՐ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րուհի Ցիալա Կալմախելիձեն, նկարիչ Քեթի Մաթաբելին, երգիչ Ռամին Միքաբերիձեն, երաժիշտներ Թեմուր Կվիտելաշվի-

լին եւ Ջենալ Բաղաշվիլին, աշխարհագրագետ Թամազ Գեղիձեն, երգահան Գիորգի Ելախիձեն, պրոֆեսոր Թեմուրազ Բաբունաշվիլին, լրագրող, դերասան Նուրգալ Շարիան, գործա-

րար Նոդար Գիորգաձեն, մետրոպոլիտենի աշխատակից Թեմուր Գոլիձեն, դիվանագետ Գելա Չարկվիանին եւ Լեհաստանի Սեյմի Վրաստանի հետ բարեկամության խորհրդարանա-

կան խմբի նախագահ Մալգոթետա Գաշեւսկան: Պատվավոր քաղաքացիների պարգևատրման արարողությունն անցկացվեց Թբիլիսիի «Քարվանսալ» թանգարանում:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՅԵՅ ԵՐԵՎԱՆԻ ՔՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կամո Արեյանը եւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սերգեյ Մակարյանը Թբիլիսիի քաղաքապետի հետ քննարկեցին երկու քաղաքների միջեւ բազմակողմ համագործակցության խթանման առնչվող հարցեր: Այդ համատեքստում մասնավորապես քննարկվեցին մուսուլման ժողովրդի փոխանակման, զբոսաշրջության, կրթամշակութային, առեւտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման եւ այլ հարցեր:

րակությունը մասնակցեց նաեւ տոնակատարության կապակցությամբ Թբիլիսիի այցելած պատվիրակությունների պաշտոնական ընդունելությանը, որին ներկա է եղել նաեւ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:


«Թբիլիսոբային» Երեւանի պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելության համար Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը շնորհակալական ուղերձ է հղել Գիորգի Ուզուլաշվիլին:

Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Չարգելի» պարոն քաղաքապետ: Թույլ տվեք շնորհակալություն հայտնել «Թբիլիսոբային» տոնակատարությանը Երեւանի

պատվիրակության ընդունելության եւ հետաքրքիր ծրագրի առթիվ, որն իրականացվեց Թբիլիսիի քաղաքապետարանի աշխատակիցների արհեստավարության շնորհիվ:

Մենք մեծ նշանակություն ենք տալիս մեր եղբայրական երկու քաղաքների միջեւ բարեկամական եւ երկկողմ օգտավետ համագործակցությանը եւ համոզված ենք, որ փոխայցելությունները կնպաստեն այդ հարաբերությունների խորացմանն ու զարգացմանը:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ Ձեզ եւ Թբիլիսիի բնակիչներին մաղթել առողջություն, երջանկություն եւ բարեկեցություն:



ԱՊՐԵՋԱՆ

ԱԼԻԵԿԸ ՎԵՐՈՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հոկտեմբերի 9-ին վերընտրվեց նախագահի պաշտոնում երրորդ անգամ: Նախնական արդյունքներով 2003 թվականից նախագահի պաշտոնը զբաղեցնող Ալիևը ստացել է ծայրերի 83,89 տոկոսը, իսկ ընդդիմության միասնական թեկնածու Ջամիլ Հասանլին՝ 8,2 տոկոս: Ընտրություններին մասնակցել է 10 թեկնածու:

ԵՄ Արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը և ԵՄ Ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հանձնակատար Շոտֆան Ֆյուլեն սուր քննադատության են ենթարկել հոկտեմբերի 9-ին Ադրբեջանում նախագահական ընտրությունների անցկացումը:

ԱՄՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԳՆԱԺԱՍԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԱՄՆ-ի համերկային կառավարության գործունեության ֆինանսավորման մասնակի դադարեցումը, ինչը տեղի է ունեցել 2014 ֆինանսական տարվա հաստատված բյուջեի բացակայության պատճառով, արդեն գրեթե 2 մլրդ դոլար գումարի վնաս է հասցրել երկրի տնտեսությանը: Այդ մասին հոկտեմբերի 8-ին հայտարարել է IHS Global Insight ամերիկյան կոնսալտինգային ընկերությունը:

Նրա տվյալներով կառավարության աշխատանքի դադարեցման միայն առաջին վեց օրում վնասը կազմել է 1,6 մլրդ դոլար: Այս շաբաթ ամեն օրը ԱՄՆ-ի տնտեսության վրա նստում է 160 մլն դոլար: Այդպիսով, այսօր միագումար վնասները գերազանցում են 2 մլրդ դոլարը: Իր հերթին, Արժույթի միջազգային հիմնադրամի գլխավոր տնտեսագետ Օլիվիե Բլանշարը նշել է, որ, եթե ԱՄՆ-ի ֆինանսաբյուջետային ճգնաժամը զարգանա անբարենպաստ սցենարով, դա կարող է հանգեցնել «ռեցեսիայի կամ նույնիսկ ինչ-որ ավելի վատ բանի»: Առայժմ, նրա խոսքով, Չինաստանում հուսով եմ, որ ԱՄՆ-ին «կհաջողվի խուսափել ֆինանսական վթարից»:

ՍԻՐԻԱ

ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՈՂՆՉԱՑՎԵԼ Է

Պոլտեմբերի 6-ին սիրիացիները ոչնչացրեցին քիմիական զենքի արեսնալի մեծ մասը՝ Քիմիական զենքի արգելման կազմակերպության 33 մարդուց բաղկացած փորձագետների խմբի ղեկավարությամբ:

Պոլտեմբերի 27-ին միաձայն որոշմամբ ԱՄՆ-ը սեպտեմբերի 27-ին միաձայն հավանություն տվեց Սիրիայում քիմիական զենքի ոչնչացման վերաբերյալ բանաձեւին:

ԻՏԱԼԻԱ

ԲԵՆԼՈՒՄԿՈՆԻՆԻՆ ՆԵՐՈՒՄ ԶԻ ՇՆՈՐՉՎԻ

Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին կարող է համաներման հույս չունենալ, հայտարարել է երկրի նախագահ Ջորջո Նապոլիտանոն: Նրա խոսքով՝ բոլոր նրանք, ովքեր հակառակ են ասում, անտարբեր են երկրի հանդեպ:

«Նրանց ուղեղում միայն մի միտք է, նրանք թքած ունեն երկրում առկա խնդիրների վրա»,- ասել է Նապոլիտանոն:

Նախագահը նշել է նաեւ, որ Իտալիայի բանտերում տիրող իրավիճակը, երբ չեն պաշտպանվում բանտարկյալների իրավունքները, «խայտառակում է երկիրը»:

Նախագահի խոսքով՝ «շուտափույթ լուծման կարիք ունի իտալական բանտերի գերծանրաբեռնվածության խնդիրը»: Որպես հարցի լուծման տարբերակ՝ Նապոլիտանոն չի բացառում նոր համաներման անցկացումը:

Պոլտեմբերի 27-ին Բեռլուսկոնին 4 տարվա ազատազրկման էր դատապարտվել ֆինանսական խարդախությունների համար:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ՆԻՍՏԸ ՉԻ ԿԱՅԱՆԱ ՎԱՐՉԱԴԵՏԸ ՇՐԱԺԱՐԿԵՆ ՄԱՍՆԱԿՅԵԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սակաշվիլին երկրի գործադիր իշխանությանը առաջարկեց հոկտեմբերի 12-ին անցկացնել Ազգային անվտանգության խորհրդի նիստ՝ կապված Հարավային Օսեթիայի հետ սահմանին տեղի ունեցած դեպքերի եւ Մոչի-2014 ծննդային օլիմպիադայի մասնակցելու հարցի հետ:


Այդ մասին հայտարարեց երկրի նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրո Բարնովը: Նրա խոսքերով, նախագահն անհրաժեշտ է համարում քննարկել իրավիճակը՝ կապված Հարավային Օսեթիայի հետ սահմանին ռուս սահմանապահների կողմից փշալարերով բաժանարար գիծ անցկացնելու հետ, ինչպես նաեւ քննարկել

Վրաստանի արձագանքը Ռուսաստանի գործողություններին:

Թեպետ, ամենայն հավանականությամբ, Անվտանգության խորհրդի նիստը երթական անգամ չի կայանա, քանզի, ինչպես տեղեկացրել են Վրաստանի վարչապետի մամուլի ծառայությունից, Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին չի մասնակցի Ազգա-

յին անվտանգության խորհրդի նիստին: Ինչպես նշել է վարչապետի մամուլի ծառայությունը, կառավարությունը արդեն իսկ զբաղվում է վերոնշյալ հարցերով եւ նախագահի ուղացած առաջարկությունը էական ոչ մի ազդեցություն ունենալ չի կարող:

Նիստին չի մասնակցի նաեւ պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան: Վերջինիս հայտարարությամբ, ինքն պատրաստ է հեռակա կարգով խորհրդի առաջ հաշվետու լինել, սակայն նիստին իր ներկայությունն անհրաժեշտ չի համարում:



ՍՈՒՐԲ ԳԻՈՐԳԻ ԾՔԱՆՇԱՆ՝ ԱՆԴՐԵՅ ԻԼԼԱՐԻՈՆՈՎԻՆ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սակաշվիլին պետական բարձրագույն պարգև՝ Սուրբ Գիորգիի հարթանակի շքանշան է շնորհել ռուս ընդդիմադիր, Ռուսաստանի նախագահի՝ տնտեսական հարցերով նախկին խորհրդական Անդրեյ Իլլարիոնովին: Սակաշվիլին Իլլարիոնովին անվանել է Ռուսաստանի մեծ հայրենասեր եւ ընդգծել է, որ նա վիթխարի ներդրում է ունեցել 2008 թվականի ռուս-վրացական օգոստոսյան պատերազմի հիմքերի հետազոտման մասին (խոսքը գնում է Իլլարիոնովի հետազոտությունների մասին, որոնցում նա օգոստոսյան պատերազմը որակել է որպես «ռուսական հատուկ ծառայությունների փառահեղ սադրանք»):

ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐ

«ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ» ԴԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ ՄԱՅՆ ԵՄԻՅԵԼ, ՓՈԽՎԵՆՆԵՐԻ ՄԻԱՅՆ ԴՐՈՇԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կուսակցականներ: Գործադիր կոմիտեի նախագահ է ընտրվել «Ազգայիններից» նախագահության թեկնածու եւ խորհրդարանական փոքրամասնության լիդեր Դավիթ Բաբրաձեն:

Ինչպես հայտարարեց Դավիթ Բաբրաձեն, կուսակցությունն անց-

նում է ղեկավարման ժողովրդավարական սկզբունքի եւ այսուհետեւ այն կդառնա այնպիսի մարմին, որը երկրում կնախաձեռնի ժողովրդական նորամուծությունները: Նա ընդգծեց, որ Միասնական ազգային շարժումը Վրաստանում միակ կուսակցությունն է, որը նախագահության թեկնածուին ոչ թե հայտարարել է, այլ՝ բացահայ-

տել Վրաստանի ողջ մասշտաբով անցկացված հարցման արդյունքներով:

Համագումարին ներկա էր եւ Ելույթ ունեցավ Վրաստանի նախագահ Միխեիլ Սակաշվիլին:

Նա առաջարկեց նոր կուսակցական դրոշի ընդունումը: Միխեիլ Սակաշվիլին խոսքերով, տասը տարի առաջ Ազգային

շարժումը ժողովրդի առաջ հանդես եկավ ազգային դրոշով: Իսկ հիմա նախագահի առաջարկությամբ, կուսակցական դրոշը իրենից ներկայացնում է մի մեծ կարմիր խաչ, իսկ չորս փոքր խաչերի փոխարեն, ինչպես ազգային դրոշի վրա է, կուսակցական դրոշի վրա կներկայացվեն չորս փոքր կարմիր սրտեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՎԱՌՉԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿՎԵՐՍՎՍՎԻ ՆՈՅՏԵՐԵՐԻՆ



Թբիլիսյան ընտանիքներին կոմունալ ծախսերի համար 20 լարիանոց վաուչերների հանձնումը կվերսկսվի նոյեմբերին:

Այդ մասին տեղեկացրել է մայրաքաղաքի քաղաքապետարանը: Չնայած ամիսներին կոմունալ ծախսերի կտրուկ ավելացման կապակցությամբ 2012 թվականի դեկտեմբերին մայրաքաղաքի իշխանությունները հաստատեցին թբիլիսյան ընտանիքներին 2013 թվականին կոմունալ ծախսերի համար 100 լարիանոց վաուչերների, իսկ սոցիալական անպաշտպան ընտանիքներին՝ 250 լարիանոց վաուչերների հանձնման ծրագիրը: Վաուչերի վերոնշյալ գումարը բաժանված է 5 ամիսների վրա:

«Վաուչերի հանձնումը կվերսկսվի նոյեմբերին: Օգոստոսյանը կցուցաբերվի երկու ամիս՝ նոյեմբերին եւ դեկտեմբերին: Բոլոր արժեքները կստանան 20 լարի վաուչեր, անկախ սոցիալական կարգավիճակից»,- ասված է քաղաքապետարանի հաղորդագրության մեջ: Քաղաքային բյուջեի նախագծի համաձայն, 100 լարիանոց վաուչեր կտրվի 350 հազար ընտանիքների, իսկ 250 լարիանոցը՝ 45 հազար այն ընտանիքներին, ուն սոցիալական գնահատման վարկանիշը 70 հազարից ցածր է: Վերոնշյալ 250 լարի գումարից սոցիալապես անպաշտպան անձը առձեռն կստանա 100 լարի, իսկ գումարի մնացած մասը կփոխանցվի կոմունալ ծախսերի մարման համար:

«Վաուչերի հանձնումը կվերսկսվի նոյեմբերին: Օգոստոսյանը կցուցաբերվի երկու ամիս՝ նոյեմբերին եւ դեկտեմբերին: Բոլոր արժեքները կստանան 20 լարի վաուչեր, անկախ սոցիալական կարգավիճակից»,- ասված է քաղաքապետարանի հաղորդագրության մեջ: Քաղաքային բյուջեի նախագծի համաձայն, 100 լարիանոց վաուչեր կտրվի 350 հազար ընտանիքների, իսկ 250 լարիանոցը՝ 45 հազար այն ընտանիքներին, ուն սոցիալական գնահատման վարկանիշը 70 հազարից ցածր է: Վերոնշյալ 250 լարի գումարից սոցիալապես անպաշտպան անձը առձեռն կստանա 100 լարի, իսկ գումարի մնացած մասը կփոխանցվի կոմունալ ծախսերի մարման համար:

ՔՐԵԱԿԱՆ

ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է իրավախախտումների ընթացիկ տարվա ինն ամիսների վիճակագրությունը, որոնք ներկայացնում են երկրի ողջ մասշտաբով քրեական իրավիճակը:

Վիճակագրական տվյալներով, 2013 թվականի նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, երկրի ողջ մասշտաբով, իրավախախտումները

նվազել են 5589 միավորով, բացահայտման ցուցանիշը ավելացել է 37,2 տոկոսով եւ կազմել 57,2 տոկոս:

ՆԳ նախարարությունը հրապարակել է նաեւ սեպտեմբերի տվյալները: 2013 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 644 միավորով, իսկ բացահայտման ցուցանիշը կազմել է 68,4 տոկոս՝ 2013 թվականի 55,5 տոկոսի դիմաց:

«Վաուչերի հանձնումը կվերսկսվի նոյեմբերին: Օգոստոսյանը կցուցաբերվի երկու ամիս՝ նոյեմբերին եւ դեկտեմբերին: Բոլոր արժեքները կստանան 20 լարի վաուչեր, անկախ սոցիալական կարգավիճակից»,- ասված է քաղաքապետարանի հաղորդագրության մեջ: Քաղաքային բյուջեի նախագծի համաձայն, 100 լարիանոց վաուչեր կտրվի 350 հազար ընտանիքների, իսկ 250 լարիանոցը՝ 45 հազար այն ընտանիքներին, ուն սոցիալական գնահատման վարկանիշը 70 հազարից ցածր է: Վերոնշյալ 250 լարի գումարից սոցիալապես անպաշտպան անձը առձեռն կստանա 100 լարի, իսկ գումարի մնացած մասը կփոխանցվի կոմունալ ծախսերի մարման համար:

30 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Ընթացիկ տարվա առաջին վեց ամսվա ընթացքում պարեկային ոստիկանությունը դուրս է գրել 31.136.828 լարիի տուգանքներ: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը: 2011 եւ 2012 թվականների համապատասխան ժամանակահատվածներում դուրս գրած տուգանքների չափերը կազմել են համապատասխանաբար՝ 21.134.952 եւ 18.276.641 լարի: Դա նշանակում է, որ այս տարի 2011 թվականի առաջին կիսամյակի համեմատությամբ, տուգանային պատժամիջոցներն ավելացել են 9.971.876 (47,2 տոկոս), իսկ 2012 թվականի համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ՝ 12.830.187 (70 տոկոս) լարիով:

ՎԿԱՆԵՐԻ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

Վկաների հարցաքննության նոր կարգի ներդրման ժամկետները փոխվել են: Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեում օրինանախագծի քննարկումից հետո, պատգամավորները պայմանավորվեցին, որ վկաների հարցաքննության նոր կարգը կկիրարկվի ոչ թե 2014 թվականի դեկտեմբերի մեկից, այլ՝ 2013 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

Վրաստանի կառավարության խորհրդարանական բարտուղար Շավա Թադոմաձեի հայտարարությամբ, քննչական մարմինները դեռեւս պատրաստ չեն հրապարակայնորեն անցկացնել վկաների հարցաքննությունը: Նրա խոսքերով, վերոնշյալ ժամկետի համար գոյություն չունեն նաեւ վկաների պաշտպանության իրավական մեխանիզմներ:

Վկաների հարցաքննության նոր կարգի մասին փոփոխությունները կատարվելու են Վրաստանի քրեադատավարական օրգաններում:

ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԽՍՏԱՅՎՈՒՄ ԵՆ

Վրաստանում սեռական բռնության հետ կապված հանցագործությունների քրեական պատասխանատվությունը խստացվում է:

Երկրի քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագծով խորհրդարանին դիմել է ներքին գործերի նախարարությունը:

Պատժամիջոցները եւ պատժամակետները ավելացվում են Վրաստանի քրեական օրենսգրքով նախատեսված հետեւյալ

հանցագործությունների համար՝ բռնաբարություն (137 հոդված), սեռական բռնության բռնի գործողություններ (138 հոդված), սեռական կապի պարտադրում կամ սեռական բռնության գործողություններ (139 հոդված), սեռական կապ դեռ 16 տարեկան չլրացած անձանց հետ կամ սե-

ռական բռնության գործողություններ այն անձանց նկատմամբ, ուն 16 տարին չի լրացել (140 հոդված) եւ այլատեսակ գործողություններ (141 հոդված):

Մասնավորապես, Վրաստանի քրեական օրենսգրքի գործող խմբագրությամբ բռնաբարության համար նախատեսված 4-ից մինչեւ 6 տարվա ազատազրկում: Խորհրդարանի քննարկմանը ներկայացված նա-

խագծի համաձայն, այդ հանցագործության համար պատիժը խստացվում է եւ հասցվում 6-ից մինչեւ 8 տարվա ազատազրկման: 8-ից մինչեւ 10, 10-ից մինչեւ 13 եւ 15-ից մինչեւ 20 տարվա ազատազրկում է նախատեսվում այն հանցագործությունների համար, որոնք նախատեսված են Վրաստանի քրեական օրենսգրքի 137 հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԻ ԴԵՄ

Առանձնակի խոշոր չափերի միջոցների հափշտակման մեղադրանքով քրեական պատասխանատվության է ենթարկվել Քութաիսիում Վրաստանի խորհրդարանի նոր շենքի կառուցած «Սենո ինտերնեյշնլ» ընկերության տնօրեն Գիորգի Կուրցխալիան:

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայության տեղեկատվությամբ, հետաքննությամբ պարզվել է, որ 2010 թվականի մարտի 17-ին վերոնշյալ ընկերության հետ ստորագրվել է Քութաիսիում խորհրդարանի նոր շենքի շինարարության մասին պայմանագիր: Ընկերությունը պետությունից ստացել է 281 միլիոն լարի: Տարբեր մեթոդներով ընկերության համար աշխատանքների ինքնարժեքի

արհեստական բարձրացման ուղիով, ընկերության տնօրեն Գիորգի Կուրցխալիան այդ գումարից յուրացրել է 11 612 469 լարի: 2007 թվականի մարտի 21-ին նույն ընկերության հետ Վրաստանի պաշտպանության նախարարությունը կնքել էր պայմանագիր Քութաիսիում զինծառայողների համար 18 բազմահարկ մասնաշենքերի կառուցման համար: Պետությունից ընկերությանը փոխանցվել էր 56 497 662 լարի: Տվ-

յալ պարագայում էլ Կուրցխալիան ապօրինաբար յուրացրել է 4 944 479 լարի:

Հետաքննչական ծառայության տվյալներով, ընդհանուր առմամբ, Գիորգի Կուրցխալիան յուրացրել է 16 556 948 բյուջետային միջոցներ: Նրան սպառնում է 6-ից մինչեւ 9 տարվա ազատազրկում:



ՀԱՍՏԱՊՈՐՏԱՎՅՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԴԵՏՈՒԹՅՈՒՆ-ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՆ ԵՐ

Հոկտեմբերի 9-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հանդիպում ունեցավ երկրի բիզնես-ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը խորհրդարանի խոսնակը հայտարարեց, որ օրենսդիր մարմնում բիզնես-ասոցիացիան կունենա իր մշտական լոբբիստը: «Հանդիպումը շատ հետաքրքիր էր եւ օգտակար: Դրան ներկա էին բոլոր առաջատար գործարարները: Մենք խոսեցինք պետության եւ գործարարության նորմալ հարաբերությունների հաստատման ուղիների մասին: Պայմանավորվեցինք ամեն եռամսյակ հանդիպել: Պայմանավորվեցինք, որ բիզնես-ասոցիացիան խորհրդարանում ունենա իր մշտական լոբբիստը, որի համար բոլոր կոմիտեների դռները բաց կլինեն, եւ ոչ մի օրենք առանց նրանց եզրակացության չի ընդունվի»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին հանդիպման ավարտից հետո:

Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում կայացած հանդիպմանը, խորհրդարանի խոսնակը գործարարներին հավաստիացրեց, որ գործարար շրջանները նախօրոք կտեղեկացվեն մշակվող օրինանախագծերի մասին: «Ես պատրաստ եմ եռամսյակը մեկ հանդիպել նրանց հետ, թեպետ գտնում եմ, որ հանդիպումից երկու-երեք շաբաթ շուտ մենք պետք է պայմանավորվենք հանդիպման

ծեւաչափի մասին: Երբ խոսում ենք խորհրդարանի դերի բարձրացման մասին, ապա նկատի է առնվում ոչ միայն իրավասությունների ավելացումը, այլեւ խորհրդարանի առջեւ հաշվետվության մակարդակի բարձրացումը»,- նշեց Ուսուփաշվիլին: Ընդգծելով գործարար շրջանների հետ համագործակցության անհրաժեշտությունը, Դավիթ Ուսուփաշվիլին նշեց, որ չի բացառում զարմանք անցկացվի միջազգային խորհրդաժողով, որտեղ կոր-



Վեն խորհրդարանի եւ մասնավոր հատվածի հարաբերությունների ձեւաչափի, համագործակցության նորմերի, վարքի եւ այլ կարեւոր հարցեր: «Կխոսենք այն մասին, թե ինչ-

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԴԵՏԲՅՈՒՋԵ. ԻՆՉ ԵՆ ՄԱՏՆԱՆՇՈՒՄ ԹՎԵՐԸ

ՎԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՎԱՏԵՏՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԵՐՆ ԵՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, 2014 թվականի պետական բյուջեն հավասարվում է 9 միլիարդ լարիի: Նախորդ տարվա համեմատությամբ, պետբյուջեն ավելացվում է 263 միլիոն լարիով:

Ի բացառություն առաջնահերթային ճանաչված գյուղատնտեսության, առողջապահության եւ կրթության համակարգերի, որոնց բյուջեն զգալիորեն ավելանում է, մյուս ուղղություններով հաջորդ տարվա համար նախատեսված պետական ծախսերը զգալիորեն կրճատվում են: Ավելացնենք նաեւ, որ, նախորդ տարիների բյուջեների համեմատությամբ, պետության սոցիալական պարտավորությունների կատարման համար 2014 թվականի բյուջեում նախատեսված են ռեկորդային գումարներ:

վեց՝ 100 միլիոնի, ինչը հանգեցրեց երկրի նախագահի գայրույթին, արդյունքում, նրա կարգադրությամբ Հավլաբարում գտնվող նախագահական նստավայրի լուսավորությունը, տնտեսման համար, որոշ ժամանակ անջատվել էր:

Ինչ վերաբերում է պետբյուջեից ֆինանսավորվող կոնկրետ ուղղություններին, ապա նախատեսվում է ռեկորդային աճ առողջապահության մասին: 2014 թվականին վերոնշյալ գերատեսչության բյուջեն կկազմի 2,7 միլիարդ լարի, ինչը, 2012 թվականի հատկացման համեմատությամբ, մեկ միլիարդ լարիով ավելի է եւ, ընդհանրապես կազմում է պետբյուջեի ողջ գումարի գրեթե 30 տոկոսը: Ընդամենի կառավարությունը կշարունակի 2013 թվականին սկսած նախագծերի ֆինանսավորումը: Սոցիալական պաշտպանության եւ կենսաթոշակային ապահովության ֆինանսավորումն ավելացվում է 268,3 միլիոն լարիով եւ, վերջին հաշվով, այդ նպատակներով 2014 թվականին ծախսվելու է 1,921 միլիարդ լարի: Այդ գումարից 1,326 միլիարդը, նախորդ տարվա համեմատությամբ 220 միլիոնով ավելի է, որը ծախսվելու է կենսաթոշակների ապահովման համար: Ավելացնենք նաեւ, որ բյուջեում նախատեսված է կենսաթոշակների պարբերական ավելացումը եւ կենսաթոշակային համակարգի բարեփոխման շրջանակներում կենսաթոշակային կուտակման համակարգին անցումը: Ինչ վերաբերում է բնակչության հանրընդհանուր առողջապահական ապահովագրությանը, ապա դրա համար բյուջեում հատկացվում է 300,777 միլիոն լարի:

ման համար: Առաջնահերթային ճանաչված սույն ուղղորտի ֆինանսավորումը անցյալ տարվա համեմատությամբ, ավելանում է 87 միլիոնով եւ, վերջին հաշվով, կկազմի 764,3 միլիոն լարի: 30 միլիոն լարիով ավելացել է դպրոցների ֆինանսավորումը: Աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու համար պետությունը 2014 թվականի բյուջեում առանձնացրել է 9 միլիոն լարի, ընդ որում՝ ուսյն նպատակի համար այս տարի հատկացվել էր 3,5 միլիոն լարի:

2014 թվականի պետական բյուջեի նախագծի համաձայն, 20 միլիոնով, այսինքն մինչեւ 50 միլիոն լարիով նվազում է արդարադատության նախարարության ֆինանսավորումը: Քրեակատարողական եւ իրավաբանական խորհրդատվության նախարարության բյուջեն 2014 թվականին կկազմի 155 միլիոն լարի, նախորդ տարվանից 19 միլիոնով քիչ: Արտաքին քաղաքականության գերատեսչության 2014 թվականի բյուջեն սահմանվել է 80 միլիոն լարիի չափով, ինչը 3 միլիոնով քիչ է անցյալ տարվա ցուցանիշից:

Ինչպես նշեցինք, 2014 թվականի համար պետբյուջեի նախագծում կանխագծված է 9,009 միլիարդ լարի, ինչը 263 միլիոնով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Նշենք, որ վերոնշյալ 9 միլիարդ լարիից 8,269 միլիարդը կազմում են բյուջետային միջոցները, 10 միլիարդը ստացվելու է գրանտների տեսքով, իսկ 630 միլիոնը պետությունը ստանալու է վարկի տեսքով:

Ինչ վերաբերում է 2013 թվականին, ապա անցած տասն ամիսների հաշվառումով, ստացվելու է 7,380 միլիարդ լարիի եկամուտ, 7,482 միլիարդ լարիի ծախսի պայմաններում: Նախորդ տարիների համեմատությամբ, ընթացիկ տարում գրանտները նվազել են 67 միլիոն լարիով, փոխարենը՝ 30 միլիոնով եկամուտներից ստացված հարկերն են ավելացել, որոնք, վերջին հաշվով, կազմելու են 6,950 միլիարդ լարի: Այլ եկամտահարկերի գումարները կազմում են շուրջ 300 միլիոն լարի, թեպետ ծախսերն էլ բավականին պատասխանելի են, ընդհանուր հաշվով հասնում են մեկ միլիարդ լարիի:

Գրեթե 718 միլիոն լարիով ավելացվել է պետության արտաքին պարտքը, իսկ ինչ վերաբերում է ներքին պարտքին, ապա այն, ծրագրված 150-ի փոխարեն, ավելացել է 400 միլիոն լարիով: Այդ գումարը պայմանավորված է պետական արժեթղթերով ստացված գումարով: Այդ առումով հատկանշական է այն փաստը, որ 2014 թվականին ֆինանսների նախարարությունը շրջանառության մեջ է դնելու ընդհանուր առմամբ 710 միլիոն լարիի արժեթղթեր, որից 300 միլիոնը ծախսվելու է նախկին պարտքերի ծախսման համար, իսկ մնացած 400 միլիոնն ավելացվում է ներքին պարտքի գումարի վրա:

Կրճատվում է նաեւ ֆինանսական գերատեսչության ֆինանսների նախարարության բյուջեն, այն 105-ից հասցվում է 100 միլիոն լարիի: Ամենախոշոր կրճատումը նախատեսված է էկոնոմիկայի նախարարությունում: Դեռեւս 2012 թվականին 184 միլիոնանոց բյուջե ունեցող գերատեսչության տնօրինության տակ 2014 թվականին ընդամենը 25 միլիոն լարի կլինի:

Ներկայիս իրավիճակից ելնելով, առանձնակի հատկանշական է այն փաստը, որ Վրաստանի տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամը ներկայիս 449,3 միլիոնի դիմաց 2014 թվականին կկազմի 250 միլիոն լարի:

Ինչ վերաբերում է 2013 թվականին, ապա անցած տասն ամիսների հաշվառումով, ստացվելու է 7,380 միլիարդ լարիի եկամուտ, 7,482 միլիարդ լարիի ծախսի պայմաններում: Նախորդ տարիների համեմատությամբ, ընթացիկ տարում գրանտները նվազել են 67 միլիոն լարիով, փոխարենը՝ 30 միլիոնով եկամուտներից ստացված հարկերն են ավելացել, որոնք, վերջին հաշվով, կազմելու են 6,950 միլիարդ լարի: Այլ եկամտահարկերի գումարները կազմում են շուրջ 300 միլիոն լարի, թեպետ ծախսերն էլ բավականին պատասխանելի են, ընդհանուր հաշվով հասնում են մեկ միլիարդ լարիի:

Գրեթե 718 միլիոն լարիով ավելացվել է պետության արտաքին պարտքը, իսկ ինչ վերաբերում է ներքին պարտքին, ապա այն, ծրագրված 150-ի փոխարեն, ավելացել է 400 միլիոն լարիով: Այդ գումարը պայմանավորված է պետական արժեթղթերով ստացված գումարով: Այդ առումով հատկանշական է այն փաստը, որ 2014 թվականին ֆինանսների նախարարությունը շրջանառության մեջ է դնելու ընդհանուր առմամբ 710 միլիոն լարիի արժեթղթեր, որից 300 միլիոնը ծախսվելու է նախկին պարտքերի ծախսման համար, իսկ մնացած 400 միլիոնն ավելացվում է ներքին պարտքի գումարի վրա:

Կրճատվում է նաեւ ֆինանսական գերատեսչության ֆինանսների նախարարության բյուջեն, այն 105-ից հասցվում է 100 միլիոն լարիի: Ամենախոշոր կրճատումը նախատեսված է էկոնոմիկայի նախարարությունում: Դեռեւս 2012 թվականին 184 միլիոնանոց բյուջե ունեցող գերատեսչության տնօրինության տակ 2014 թվականին ընդամենը 25 միլիոն լարի կլինի:

Քրեակատարողական եւ իրավաբանական խորհրդատվության նախարարության բյուջեն 2014 թվականին կկազմի 155 միլիոն լարի, նախորդ տարվանից 19 միլիոնով քիչ: Արտաքին քաղաքականության գերատեսչության 2014 թվականի բյուջեն սահմանվել է 80 միլիոն լարիի չափով, ինչը 3 միլիոնով քիչ է անցյալ տարվա ցուցանիշից:

Սլյակ հանգամանքներում անփոփոխ են մնացել ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների ֆինանսավորման չափերը: Նախորդ տարվա նման 2014 թվականի պետբյուջեի նախագծում էլ վերոնշյալ գերատեսչությունների համար նախատեսված է, համապատասխանաբար, 570 եւ 660 միլիոն լարի:

Գրեթե 718 միլիոն լարիով ավելացվել է պետության արտաքին պարտքը, իսկ ինչ վերաբերում է ներքին պարտքին, ապա այն, ծրագրված 150-ի փոխարեն, ավելացել է 400 միլիոն լարիով: Այդ գումարը պայմանավորված է պետական արժեթղթերով ստացված գումարով: Այդ առումով հատկանշական է այն փաստը, որ 2014 թվականին ֆինանսների նախարարությունը շրջանառության մեջ է դնելու ընդհանուր առմամբ 710 միլիոն լարիի արժեթղթեր, որից 300 միլիոնը ծախսվելու է նախկին պարտքերի ծախսման համար, իսկ մնացած 400 միլիոնն ավելացվում է ներքին պարտքի գումարի վրա:

Կրճատվում է նաեւ ֆինանսական գերատեսչության ֆինանսների նախարարության բյուջեն, այն 105-ից հասցվում է 100 միլիոն լարիի: Ամենախոշոր կրճատումը նախատեսված է էկոնոմիկայի նախարարությունում: Դեռեւս 2012 թվականին 184 միլիոնանոց բյուջե ունեցող գերատեսչության տնօրինության տակ 2014 թվականին ընդամենը 25 միլիոն լարի կլինի:

Քրեակատարողական եւ իրավաբանական խորհրդատվության նախարարության բյուջեն 2014 թվականին կկազմի 155 միլիոն լարի, նախորդ տարվանից 19 միլիոնով քիչ: Արտաքին քաղաքականության գերատեսչության 2014 թվականի բյուջեն սահմանվել է 80 միլիոն լարիի չափով, ինչը 3 միլիոնով քիչ է անցյալ տարվա ցուցանիշից:

Սլյակ հանգամանքներում անփոփոխ են մնացել ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների ֆինանսավորման չափերը: Նախորդ տարվա նման 2014 թվականի պետբյուջեի նախագծում էլ վերոնշյալ գերատեսչությունների համար նախատեսված է, համապատասխանաբար, 570 եւ 660 միլիոն լարի:

Սլյակ հանգամանքներում անփոփոխ են մնացել ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների ֆինանսավորման չափերը: Նախորդ տարվա նման 2014 թվականի պետբյուջեի նախագծում էլ վերոնշյալ գերատեսչությունների համար նախատեսված է, համապատասխանաբար, 570 եւ 660 միլիոն լարի:

Շարունակելով թեման, նշենք, որ 2014 թվականի պետբյուջեի նախագծի համաձայն, արտաքին պարտքի մարման համար հատկացվելու է 700 միլիոն լարի, իսկ ինչ վերաբերում է ներքին պարտքին, ապա, ամենայն հավանականությամբ, մինչ այդ թողարկած արժեթղթերի համար վերցրած վարկերի մարման համար առանձնացվել է 145 միլիոն լարի:

Առաջնահերթային ճանաչված գյուղատնտեսության ուղղորտի զարգացման համար 2014 թվականի բյուջեում նախատեսված է 290 միլիոն լարի, 2013 թվականի բյուջեից 50 միլիոնով ավելի: Վերոնշյալ գումարից 130 միլիոնը, ընդ որում, անցյալ տարվա համեմատությամբ, 70 միլիոն լարիով ավելի է նախատեսված ոռոգման համակարգերի վերանորոգման ու կարգավորման աշխատանքների համար, իսկ 68,8 միլիոնը կծախսվի արտոնյալ ագրոկարկերի ֆինանսավորման համար: Ավելացնենք նաեւ, որ գյուղատնտեսական բնագավառում հետազոտությունների եւ գիտական աշխատանքների իրականացման համար բյուջեում նախատեսվել է 6,785 միլիոն լարի:

Բյուջետային զգալի միջոցներ են առանձնացվում կրթության համակարգի զարգաց-

ման համար: Առաջնահերթային ճանաչված սույն ուղղորտի ֆինանսավորումը անցյալ տարվա համեմատությամբ, ավելանում է 87 միլիոնով եւ, վերջին հաշվով, կկազմի 764,3 միլիոն լարի: 30 միլիոն լարիով ավելացել է դպրոցների ֆինանսավորումը: Աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու համար պետությունը 2014 թվականի բյուջեում առանձնացրել է 9 միլիոն լարի, ընդ որում՝ ուսյն նպատակի համար այս տարի հատկացվել էր 3,5 միլիոն լարի:

Սլյակ հանգամանքներում անփոփոխ են մնացել ներքին գործերի եւ պաշտպանության նախարարությունների ֆինանսավորման չափերը: Նախորդ տարվա նման 2014 թվականի պետբյուջեի նախագծում էլ վերոնշյալ գերատեսչությունների համար նախատեսված է, համապատասխանաբար, 570 եւ 660 միլիոն լարի:

ՅՈՒՐԻ ԴՈՂՈՍՅԱՆ

3,1 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԴԱՐՈՒՄՆԵՐՈՒՄ 2013 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Վրաստանի Ազգային բանկի միջազգային պահուստները, նախնական տվյալներով, կազմում են 3,074 միլիարդ դոլար, ինչը 20,4 միլիոն դոլարով գիջում է 2013 թվականի օգոստոսի 31-ի ցուցանիշին: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի Ազգային բանկը, տարադրամով միջազգային պահուստները կազմում են 2,853 միլիարդ դոլար, որից արժեթղթերով գումարը կազմում է 1,834 միլիարդ դոլար, արտասահմանյան բանկերում եւ Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվում 1,019 միլիարդ դոլար: SDR-ում պահվող միջոցների ծավալը կազմում է 221,4 միլիոն դոլար, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամի պահուստային գումարը կազմում է 15,3 հազար դոլար: Տարվա սկզբից Ազգային բանկի միջազգային պահուստները ավելացել են 201,5 միլիոն դոլարով: